



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

**ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2017 թ., նոյեմբերի 22-24

**Երևան 2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
Տ 778

Հրատարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
- ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
- ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ**  
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

АСЛАНЯН СЕРГЕЙ

## ПУТИ УЛУЧШЕНИЯ СИСТЕМЫ АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗДЕЛЕНИЯ И УПРАВЛЕНИЯ РА

*Ключевые слова:* административно-территориальное разделение, местное самоуправление, территориальное управление, область, община, район, государственный и общинный бюджет

*На современном этапе хозяйствования развитие и прогресс каждой страны невозможно обеспечить без эффективного административно-территориального разделения и управления. В статье рассматривается фактическая система административно-территориального разделения РА, предлагается новый подход административно-территориального разделения и управления.*

SERGEY ASLANYAN

## THE WAYS OF IMPROVEMENT OF ADMINISTRATIVE DIVISION AND GOVERNANCE SYSTEM IN RA

*Key words:* administrative division, local self-government, territorial management, province, community, district, state and community budget

*In conditions of the modern market economy development and progress of each country is impossible without effective administrative division and governance. The article outlined the existing system of territorial division in RA and proposed a new approach to administrative-territorial division and governance.*

ՄԱՐԵՏԱ ԱՐՇԱԿՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ*

## ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ WEB ԿԱՅՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

*Հիմնաբառեր.* պահեստ, պաշար, լոգիստիկա, ինֆեգրացված լոգիստիկա, տեղեկատվական լոգիստիկա, ծրագրավորում, Web սերվեր, Web կայք, ծրագրավորման լեզուներ, PHP

*Նյութական պաշարների կառավարման գործընթացը օպտիմալ իրականացնելու համար ուսումնասիրվում են լոգիստիկան և դրա կարևորագույն բաղկացուցիչներից՝ պաշարների լոգիստիկան, պահեստավորման լոգիստիկան և տեղեկատվական լոգիստիկան:*

Լոգիստիկայում լայնորեն կիրառվում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները: Կադարելագործված ծրագրային արտադրանքների միջոցով լոգիստիկ շղթայում իրականացվում է պաշարների օպտիմալ կառավարում: Հոդվածում նշված են **Denwer, XAMPP** և **Open Server** լոկալ սերվերային հարթակները, Denwer-ով կառուցվել է վեբ կայք՝ <http://localhost/warehouse/calculate.php>, որտեղ իրականացվում է պահեստի առցանց կառավարում: Ծրագրային կոդերը գրված են HTML և PHP ծրագրավորման լեզուներով:

Ցանկացած արտադրության կամ ընկերության զարգացումը, առաջընթացը և ինքնահաստատումը կախված են նյութական պաշարների ճիշտ և արդյունավետ օգտագործումից: Այդ իսկ պատճառով պաշարների կառավարմանը վերաբերող բոլոր հարցերիս խնդիրների ռացիոնալ լուծումը չափազանց կարևոր է: Այսօր լոգիստիկայի զարգացումը կտրուկ վերակառուցել է պաշարների կառավարման գործընթացը: Շնորհիվ ժամանակակից տեղեկատվական համակարգերի զարգացման և ներդրման՝ ձևավորվել են ինտեգրված լոգիստիկ համակարգեր, որտեղ, պաշարների լոգիստիկայի, պահեստավորման լոգիստիկայի, տրանսպորտային լոգիստիկայի և լոգիստիկայի այլ բաղկացուցիչների հետ մեկտեղ, չափազանց կարևորվում է տեղեկատվական լոգիստիկան: Տեղեկատվական լոգիստիկան լոգիստիկ համակարգի անբաժանելի մասն է: Դրա հիմնական նպատակն է անհրաժեշտ ժամկետներում, անհրաժեշտ ծավալով և անհրաժեշտ տեղում ապահովել լոգիստիկ համակարգերը տեղեկատվությամբ: Համակարգչային տեխնիկայի և ժամանակակից ծրագրային ապահովման օգտագործումը թույլ է տալիս լոգիստիկ համակարգում պահեստի և պաշարների կառավարումը զգալիորեն բարելավել:

Լոգիստիկայի արդի վիճակը և զարգացումը հիմնականում ձևավորվել է բիզնեսի բոլոր ոլորտներում ինֆորմացիոն-համակարգչային տեխնոլոգիաների ներդրմամբ և արագ զարգացմամբ: Բազմաթիվ լոգիստիկ մոտեցումների (համակարգերի) իրականացումը, ինչպես, օրինակ, SDP, JIT, DDT և այլն, անհնար կլիներ առանց արագագործ համակարգիչների, տեղային հաշվողական ցանցերի, հեռահաղորդակցման համակարգերի և ինֆորմացիոն-ծրագրային ապահովման կիրառման: Տեղեկատվական ցանցը համակարգչային ծրագրերի և տեղեկատվական ռեսուրսների օգտատերերի համախումբ է, որոնք միավորված են միասնական տեղեկատվական ալիքով՝ տեղեկատվական հոսքերի արդյունավետ մշակման և փոխանցման համար:


Լոգիստիկայի մեջ տեղեկատվական համակարգերը բնութագրվում են բարձր կարգի ծրագրային լուծումների ինտեգրմամբ: Լոգիստիկայում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից է վեբ կայքերի նախագծումն ու մշակումը: Բոլոր վեբ նախագծողների, ինչպես բոլոր մյուս նախագծողների և մասնագետների համար, անհրաժեշտ են մի շարք ծրագրային փաթեթներ: Վեբ ծրագրավորողների համար դա վեբ-սերվերն է: Հայտնի վեբ-սերվերներից են՝

**Denwer-ը** ծրագրերի մի հավաքածու է, որը վեբ ծրագրավորողին ընձեռում է սովորական համակարգչի վրա, առանց ինտերնետի հասանելիության, WINDOWS OC-ի կառավարման ներքո, դինամիկ էջերով կայքեր կառուցելու հնարավորություն:

**XAMPP**-ը վեբ-սերվեր է, որը պարունակում է Apache, MySQL, PHP սքրիպթերի ինտերպրիտատոր, Perl ծրագրավորման լեզու և շատ մեծ քանակությամբ լրացուցիչ գրադարաններ, որոնք ձևավորում են ամբողջական, լիակատար վեբ-սերվեր:

**Open Server**-ը շարժական սերվերային հարթակ է, ծրագրային միջավայր վեբ ծրագրավորողների համար:

Նշված սերվերային հարթակները նախատեսված են PHP և այլ կոդեր մշակելու համար: **PHP (Hypertext Preprocessor)**-ն վեբ կայքեր ստեղծելու հիպերտեքստային, սկրիպտային ծրագրավորման լեզու է: Լեզվի պարզության, կատարման արագության, բազմաթիվ ֆունկցիաների և PHP արտոնագրով ընթացիկ կոդերի տարածման շնորհիվ՝ այսօր վեբ-ծրագրավորման ոլորտում PHP-ն դեռ համարվում է ծրագրավորման առաջնային լեզուներից մեկը (նկ.1):



**Նկար 1.** Հոլանդական TIOBE Software BV ընկերության վարկանշային փվյալները

**Denwer** վեբ-սերվերի **localhost**-ում կառուցվել է **warehouse** անունով կայք՝ ըստ HTML (նկ.2) և PHP (նկ.3) լեզուներով մշակված ծրագրերի՝

```

<html><head>
<meta charset="utf-8" />
<title>Ֆորմա</title></head>
<body bgcolor=lightblue><center>
<p><font size=5>Պահեստի կարավարում:</font></center>
<form method="post" action="http://localhost/warehouse/calculate.php">
<center><br>
<p>Պահեստ:<input type="text" name="val1" size=12></p>
<p>Մատակարար:<input type="text" name="val2" size=12></p>
<p>Առաքիչ:<input type="text" name="val3" size=12></p>
<input type="radio" name="calc" value="sum">Հաշվել<br><br>
<input type="radio" name="calc" value="min">Մատակարարում և առաքում
<br>չի կատարվել<br>
<p><input type="submit" name="submit" value="Հաղորդել "></p>
</center></form></body></html>

```

### Նկար 2. HTML կոդ

```

<?php
$val1=isset($_POST['val1'])?$_POST['val1']:"";
$val2=isset($_POST['val2'])?$_POST['val2']:"";
$val3=isset($_POST['val3'])?$_POST['val3']:"";
$calc=isset($_POST['calc'])?$_POST['calc']:"";
if (($val1=="" || $val2=="" || $val3=="" || $calc=="")){
header("Location:http://localhost/warehouse/calculate_form.html");
}
if ($calc=="sum") {$result=$val1+$val2-$val3;}
else if ($calc == "min") { $result=$val1+$val2+$val3; }
?>
<html><body bgcolor="lightgreen"><center>
<font face="arial armenian" size=5><p> Հաղորդագրություն </p>
<br> Պաշարի չափը պահեստում=<?php echo $result;?> </font>
</center> </body> </html>

```

### Նկար 3. PHP կոդ

Ձևավորվել են **D:\home\localhost\www\warehouse\calculate\_form.html** և **http://localhost/warehouse/calculate.php** հասցեներով վեբ էջեր: **D:\home\localhost\www\warehouse\calculate\_form.html** էջում «Պահեստի կառավարում» ձևաչափով մուտքագրվում են մատակարարման և առաքման տվյալները, հաշվարկի արդյունքն արտացոլվում է **http://localhost/warehouse/calculate.php** էջում:

**Նկար 4.** Մատակարարման և առաքման դեպքում

**Նկար 5.** Մատակարարում և առաքում չի կատարվում

Հոդվածում ներկայացվել են՝ վեբ կայքի կառուցման եղանակ, լոգիստիկ շղթայում պահեստի և պաշարի կառավարման ծրագրային կոդեր:

Մշակված տեղեկատվական համակարգը ապահովում է լոգիստիկ պահեստի առ-ցանց, արդյունավետ կառավարումը:



**МАРЕТА АРШАКЯН**  
**ПРОЕКТИРОВАНИЕ И РАЗРАБОТКА ВЕБ-САЙТА СИСТЕМЫ ХРАНЕНИЯ**  
**МАТЕРИАЛЬНЫХ ЗАПАСОВ**

*Ключевые слова:* склад, запас, логистика, интегрированная логистика, информационная логистика, программирование, веб-сервер, веб-сайт, языки программирования, PHP

С развитием логистики, на основе использования современных информационных технологий, и совершенных программных продуктов осуществляется оптимальное управление запасами. На веб-серверах проектируются веб-сайты для автоматизации логистических систем. В статье описаны локальные серверные платформы **Denwer**, **XAMPP** и **Open Server**. На сервере **Denwer** построен веб-сайт **http://localhost/warehouse/calculate.php**, где осуществляется управление склада в режиме онлайн. Программные коды написаны на языках программирования **HTML** и **PHP**.

**MARETA ARSHAKYAN**  
**WEB SITE DESIGN AND LAYOUT OF THE MATERIAL INVENTORY STORAGE SYSTEM**

*Key words:* warehouse, stock, logistics, integrated logistics, information logistics, programming, Web server, Web site, programming languages, PHP

Logistics and logistics considerations, inventory logistics, storage logistics and information logistics are studied in order to optimize the material stock management process. Modern information technologies are widely used in logistics. Optimized resource management is provided through improved software products in a logistic chain. The article describes the local server platforms **Denwer**, **XAMPP**, and **Open Server**, a Web site built in **Denwer**, **http://localhost/warehouse/calculate.php** where online storage is maintained. Program codes are written in **HTML** and **PHP** programming languages.

**ՎԱՀԱՆ ԲԱԲԱՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ*

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ**  
**ԷՈՒԹՅՈՒՆԸ**

*Հիմնաբառեր.* բարձրագույն ուսումնական հաստատություն, ռիսկ, ռիսկերի կառավարման համակարգ, ռիսկերի կառավարման գործընթաց

Հոդվածում ներկայացվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական և գիտահետազոտական աշխատանքների հիմնական ռիսկերը, այնուհետև առաջա-